

**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի»
համար ՖՏ 2020
«Մարգահովիտ գյուղի դպրոցին մարգասարքերի տրամադրման» ծրագրի
ավարտի արարողություն**

2021 թվականի օգոստոսի 11-ին Լոռու մարզի Մարգահովիտ գյուղում տեղի ունեցավ «Մարգահովիտ գյուղի դպրոցին մարգասարքերի տրամադրման» 19,411 ԱՄՆ դոլար (2,343,000 Ճապ. իեն) արժողությամբ դրամաշնորհային ծրագրի ավարտի արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Հանդիսավոր արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ֆուկուշիմա Մասանորին, Մարգահովիտ գյուղի գյուղապետ Սամվել Անանյանը, Մարգահովիտի միջնակարգ դպրոցի տնօրեն Աշոտ Անտիկյանը, «Մարգահովիտ երիտասարդական կենտրոն» ՀԿ նախագահ տիկին Էմիլիա Մարտիրոսյանն, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, դպրոցի անձնակազմը և աշակերտները:

«Մարգահովիտ գյուղի դպրոցին մարգասարքերի տրամադրման» ծրագրի նպատակն է՝ խթանել Մարգահովիտի երեխաների և երիտասարդների առողջ ապրելակերպն ու կրթական զարգացումը: Դրամաշնորհն ուղղվել է կահավորված մարգահրապարակի և խաղահրապարակի ստեղծմանը, որից հնարավորություն կունենան օգտվել համայնքի ավելի քան 400 աշակերտներ, ինչպես նաև 3000 մեծահասակներ:

Հանդիսության սկզբում, ջերմորեն ողջունելով հյուրերին, տիկին Մարտիրոսյանն իր երախտագիտությունը հայտնեց Ճապոնիայի կառավարությանը և Հայաստանում Ճապոնիայի դեսպանատանը՝ ներդրման և վստահության համար, որի արդյունքում «Մարգահովիտ երիտասարդական կենտրոն» ՀԿ-ն հաջողությամբ ավարտեց գյուղի դպրոցին մարգասարքերի տրամադրման ծրագրը:

Դեսպան Ֆուկուշիման, իր հերթին, ընդգծեց, որ այս օգնությունը Ճապոնիայի շարունակական քայլերից մեկն է՝ յուրաքանչյուր ուսանողի համար մատչելի կրթական և վերապատրաստման հարմարություններ ստեղծելու գործում, քանի որ աշակերտների և ուսուցիչների ֆիզիկական և մտավոր առողջությունը մեծապես կախված է դպրոցական ենթակառուցվածքների որակից: Այս ծրագիրն օգնում է հասնել մի կարևոր նպատակի, այն է՝ նպաստել մարդկանց կյանքի որակի բարելավմանը «Մարդկային անվտանգություն» հայեցակարգի շրջանակներում, որին Ճապոնիայի կառավարությունը հետևողականորեն աջակցում է:

Իր հերթին, Մարգահովտի գյուղապետ պարոն Սամվել Անանյանը շնորհավորեց ծրագրում ներգրավված բոլոր կողմերին, ինչպես նաև հույս և պատրաստակամություն հայտնեց շարունակել զարգացման ծրագրերի իրականացումը Մարգահովիտ գյուղում:

Հանդիսության ավարտին տնօրեն Անտինյանը երեխաների / աշակերտների, ծնողների և դասախոսների անունից մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնեց ճապոնիայի կառավարությանը աջակցության համար:



Ծրագրի շրջանակներում նոր կահավորված խաղահրապարակը



Խաղահրապարակում տեղադրված դրամաշնորհային աջակցության վահանակը



Տիկին Էմիլիա Մարտիրոսյանի ողջույնի խոսքը



Դեսպան Ֆուկուշիմայի շնորհավորական ուղերձը



Դրամաշնորհային աջակցության վահանակի բացման ժամանակ



Հիշատակի լուսանկար ողջունի պարը պարած երեխաների հետ